

ՏԻՐԱՅՐ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՐՏԻԿՅԱՆ

# ԵՐԲ ՎԵՀԱՓԱՌԸ ԿՎԱՌԵՐ ՏԵՐԸՆՏԵՍԻ ԿՐԱԿԸ

Այդ տեսարանը իսկապես հուզիչ էր, երբ Վեհափառը Իր անձին օրինակովը ցույց կուտար, թե որքան անհրաժեշտ է հավատարիմ մնալ հայրենի ավանդություններուն:

Հայրենի ավանդությանց պահպանումը կուգա հինեն, Լուսավորչի օրերեն: Սուրբ Գրիգոր Լուսավորիչն էր, որ Հայ Եկեղեցիի կազմակերպություն ստեղծած ատեն քրիստոնեության հավատալիքներուն միահյուսեց նաև այն սրբությունները, զորս հայ ժողովուրդը դարերե ի վեր պահպաներ էր իր ավանդությանց մեջ: Մեծ Հայրապետը չխրտչեցավ, որ այդ ավանդություններեն շատերը կուգային հեթանոսական շրջանեն: Ան ձգտեցավ անոնցմե որոշ մաս մը պատշաճեցնել քրիստոնեության, հայ ժողովուրդը կրկնապես կապելով իր նոր կրոնին:

Մեկը այն տոներեն, որ ավետարանական դրվագները կապված կգտնե հայ ժողովուրդի ավանդությանց հետ, նաև Տեառնընդառաջն է, ուր Հիսուս Մանուկին ընծայաբերումը տաճարին կզուգորդվի հայ ժողովուրդի դարավոր ձգտումին հետ դեպի լույսը:

Ուրիշ Եկեղեցիներ ալ օգտվեցան իրենց ժողովրդական ավանդություններեն, նոր կրոնը սիրելի դարձնելու հավատացյալներուն՝ անտառներու հին պաշտամունքը միացնելով Քրիստոսի ծնունդին և նույնիսկ շեղվելով Քրիստոսի ծննդյան համար նվիրակևացած թվականեն, որ հունվար 6-ն էր, զայն փոխադրեցին դեկտեմբերի 25-ին:

Հայ Եկեղեցին քրիստոնեության նվիրագործած տոներուն բերավ միացնելու Հայ Հին ժողովրդական ավանդությունները: Այսպիսով՝ Հայ Եկեղեցին կհավատար, որ ժողովուրդներու գոյատևման համար անհրաժեշտ է պահպանել նաև հին ավանդությունները:

Ամենայն Հայոց կաթողիկոսին Տեառնընդառաջի տոնին Տերընտեսի խարույկը վառելու իրաը նոր նվիրագործում մըն էր դարավոր այդ ըմբռնումներուն: Արդարև ժողովուրդները չեն կրնար ապրիլ ու տևել առանց պահպանելու իրենց հին ավանդությունները: Ավանդությունները մաս կկազմեն ժողովուրդներու հոգեկան աշխարհին որպես անխզելի մասը անոր մշակույթին, որը խարիսխն է ժողովուրդներու ինքնությունության: Որքան ալ առաջ երթա գիտությունը իր տեխնիքով, որքան ալ քաղաքակրթությունը նոր հորիզոններ բանա մարդկության առաջ, ժողովուրդի մը գոյության իմաստը միշտ պիտի մնա իր մշակույթին և ավանդություններուն մեջ: Առանց անոնց

գիտության բոլոր նվաճումները արտաքին սնգույր մը, շպար պիտի մնան, եթե մշակույթը անոնց հետ համընթաց չընթանա: Ինչ որ քաղաքակրթություն կկոչենք, կրնա սեփականությունը դառնալ բոլոր ժողովուրդներուն: Մշակույթն է միայն, որ կողք-կողքի ընթանալով քաղաքակրթության բարիքներու հետ, ազգային բնույթ կուտա ժողովուրդներու վերածնդյան և հառաջդիմության: Մշակույթը համադրությունն է բոլոր ավանդություններուն, զորս ժողովուրդները իրենց հետ կբերեն և որը իր արտահայտությունը կգտնե այլազան մարզերու վրա, որպիսին են կրոնը, արվեստներն ու գրականությունը, անգիր դպրությունը, բարքերը ու սովորությունները: Ասոնք ժողովուրդներուն ուրույն դիմագծություն կուտան և թեև անոնց այլազան տարրերը կփոխանցվին ժողովուրդե ժողովուրդ, ազդեցություններ ձգելով և ազդեցություններ կրելով, բայց հիմնական ինքնատպությունը կմնա: Ավանդությունները, ուրեմն հիմնական մասը կկազմեն ժողովուրդներու մշակույթին, և տվյալ ժողովուրդը այնքան ամուր կմնա իր ինքնատպության մեջ, որքան ամուր փարած է իր ավանդություններուն:

Սփյուռքի հայերը ևս կարիք ունին այդ ավանդությանց փարած մնալու: Եթե հայ սփյուռքի մեջ շատ դժվար է հայկական արվեստ և գրականություն ստեղծել, հայ դպրոց պահել, ավանդությանց հանդեպ տածված սերը խարիսխ մը կդառնա գոյատևման նաև գաղութներու մեջ: Այդ ավանդությանց հիմնաքարը անշուշտ Հայ Եկեղեցին է, ան է, որ կատարե հայը հայ պահելու: Բոլոր անոնք, որ կհեռանան Հայ Եկեղեցիի հովանիեն, կկորսնցնեն հայ մնալու և հայ ապրելու կարելիությունը:

Հայ Եկեղեցիի հովանիին տակ է դարձյալ, որ կպահպանվի հայ լեզուն, որ մեծագույն ազդակներեն մեկն է, որպեսզի հայ բեկորները կուլ չերթան գաղութներուն մեջ: Բայց ավանդություն ըսելով պետք չէ հասկնալ միայն Հայ Եկեղեցին ու հայ լեզուն, այլ նաև բոլոր այն հնավանդ սովորությունները, որոնք կապրին հայ ընտանիքեն ներս: Առանց հայ ընտանիքին՝ ազգային գոյատևում չկա գաղութներու մեջ: Անոնք, որ սերտած են մեր շրջանի հայ գաղութներու անցյալը, գիտեն, թե որքան մեծ դեր կատարած է հայ ընտանիքը, որպեսզի հայ գաղութները դարերով տևեն: Շրջաններ, ուր եկեղեցի չունեին՝ հայերը, և կամ կորսնցուցած էին իրենց լեզուն, հայ ընտանիքներ միշտ գոյություն ունեցան պահպանելով հինեն բերված ավանդությունները, ինչպես նաև շատ բան երբեմնի հայ բարքերեն և սովորություններեն: Մինչև այսօր ալ ընտանիքներ կմնան Մոլտովայի և Տրանսիլվանիո մեջ, որոնք իրենց հոգեկան, ազգային կապը չեն խզեր իրենց պապերեն: Շատերն անոնցմե ամուսնությանց ատեն շատ բան կկիրարկեն հին հայ ծեսերեն և ինչ որ ամենեն զարմանալի է, տոնական օրերու իրենց սեղանի վրա Անիի կերակուրն է և առաջին հերթին՝ ականջապուրը: Ինչ կվերաբերի ներկա սերունդներուն, անոնք ևս չեն կրնար հայ մնալ իրենց ընտանիքեն դուրս: Բոլորիս պարտականությունն է հետևաբար ընտանիքը հայ պահել, հայերեն ըլլա հոն խոսվող լեզուն, ու մարդ չի մոռնա հայ տոները ու այդ տոներուն հետ կապված ավանդությունները: Այս մտածումները անգամ մը ևս իմ մտքես անցան վերջերս, երբ կբաժնվեինք Էջմիածնի բակի խարույկեն, զորս Վեհափառը Իր ձեռքերովն էր վառեր: Այդ խարույկը խորհրդանշան մը թվեցավ ինծի այն գուրգուրանքին, զորս հայ ժողովուրդը ցույց է տվեր միշտ դեպի իր ավանդությունները: Այո՛, Տերընտեսի խարույկը թող ամուր մնա մեր ընտանեկան հարկերեն ներս և թող անով ջերմանան եկող հայ սերունդներն ալ, խորապես կապված մնալով իրենց պապենական հավատքին ու սովորություններուն: